

շուշտ գրչութեամբ զբաղած: Պիտի գտնուին Ս. Յակոբայ վանքին մատենադարանին մէջ իր ընդօրինակութիւնները: Իր գէշն ելած ստուար հատորի մը կը ծանօթանանք նոր հրատարակուած Ագաթանգեղոսէն (Տփղիս, 1909, հրտւ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Յռջըն, էջ ԻԵ): Այս է Ագաթ. Թիւ 230, թուղթ, նոտր. գրիչ Սարգիս Եպիսկոպոս Եւգոկիացի, «Երեսօղէմ ի վանքն Ս. Փրկչի, ՌՃԻԸ (= 1679 փրկչական) թուին. «Ի հայրապետութեան Եղիազարու եւ ի վերադիտողութեան Մարտիրոսի:», Բովանդակութիւնն է՝ Ագաթանգեղոս, «համառօտ», յառաջաբանով ունի «Հաւատամք», Դաշանց թուղթ, «Պատմութիւն յաղագս գիւտի նշխարաց Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի ի մեծի քաղաքին Կ.Պոլսի, ի ժամանակին յորում Հայոց ճԽԵ (= 696 փրկչական) էր:», Պատմութիւն Մ. Խորենացոյ, Բուզանդարան պատմութիւնք (Փաւստոս), Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւն, Թերի է վերջին տասներորդ գլուխը:»,

Կ.Պոլսոյ Եօթներորդ Պատրիարք՝ Ստեփանոս Ա. ի (1550—1561) մահուանէն ետեւ, սոյն Աթոռը ձեռքէ ձեռք սկսան յափշտակել եկեղեցականներ, որոնց յետոյ ընկերացան նաեւ աշխարհականներ: Ասիկայ տեւեց իբրեւայլ եւս հաստատեալ սովորութիւն մը՝ մինչեւ 1715 գրեթէ անընդհատ, եւ նոյն տարին Յովհ. Կոլոտի պատրիարքութեամբ իր կորովն ու սաստկութիւնը կորսնցուց: Այս մրցման սկզբնապատ-